Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

Սեմինար՝ հողատեր-վարձակալ թեմայով

Սեմինարի ընթացքում ուշադրության կարժանանա բնակելի և առևտրական բնույթի հողատեր-վարձակալ կապը, ինչպես նաև վերլուծության կենթարկվեն ԱՄՆ-ի և Հայաստանի վարձակալական պայմանագրերի օրինակներ՝ օգտագործելով համեմատական վերլուծության մոտեցումը: Սեմինարում կհամեմատվեն օրինական վարձակալական պայմանագրերի անհրաժեշտ պայմանները, ենթադրվող դրույթները, համապատասխան կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պայմանագիրը խախտելու դեպքում իրավունքի պաշտպանության միջոցները ԱՄՆ-ում և Հայաստանում: Սեմինարի մասնակիցները կներգրավվեն մոդելավորման վարժություններին, որի ընթացքում նրանց կտրվեն որոշակի դերեր, և նրանք կմասնակցեն ենթադրվող վարձակալական պայմանագիր կնքելու բանակցություններին:

Լրացուցիչ տեղեկություններ

- Սեմինարը կվարի իրավաբան Լիզա Բեյրդը՝ Ֆիլադելֆիայից, որը ներկայացրել է մեծ թվով վարձակալների և վարձակալական կազմակերպությունների և հինգ տարի աշխատել է Ֆիլադելֆիայի քաղաքային խորհրդում՝ որպես անձնակազմի փաստաբան:
- Սեմինարը կթարգմանվի հայերեն լեզվով:
- Սեմինարը կանցկացվի Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ), մայիսի 29-ին, 30-ին, հունիսի 4-ին և 6-ին, ժամը 17:30-ից մինչև 19:45-ը:
- Սեմինարին մասնակցելու գրանցումը տեղի կունենա մայիսի 13-ից մինչև մայիսի 27-ը, ՀԱՀ-ում, 19 սենյակում:
- Միայն առաջին 20 դիմորդները կմասնակցեն սեմինարին: Մուտքն անվճար է:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Հատուկ դասընթացների բաժին, հեռ. 27-16-58: